Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 806 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետությունում գիտության զարգացմանը նպաստելու նպատակով գիտական դրամաշնորհների տրամադրում գիտնականներին և գիտական խմբերին:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	Հայ օգնության ֆոնդ (630 երկրորդ պողոտա, Նյու-Յորք, ԱՄՆ)
4.	Ծրագիրը կատարողը	Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Մ. Խորենացու փողոց 22, ՀՎՀՀ՝ 02517115)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի գիտահետազոտական ինստիտուտներ, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայության տակ գործող գիտական և կրթական հիմնարկներ: Բնագավառը՝ գիտական
6.	Ծրագրի բյուջեն	65,505,000 դրամ
7.	Բարեգործությունն ստացողը	Հայաստանի Հանրապետության գիտական և կրթական հիմնարկներ, 20 գիտական խմբեր (ընդհանուր՝ 80 գիտնականներ)
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականի մայիսի 31-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. 2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2024 թվականի մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածում նախատեսվում է իրականացնել՝ 1) մրցույթի հայտարարում կայքերում, թերթերում և ֆեյսբուքյան էջերում. 2) Նյու Յորքում գտնվող դրամաշնորհի մրցույթի անցկացման կազմկոմիտեի կողմից մասնակիցների հայտերի ընդունում. 3) հետազոտական խորհրդի կողմից հայտերի գնահատում և հաղթողների ընտրություն. 4) ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղի կողմից գիտական խմբերի հետ դրամաշնորհային պայմանագրերի կնքում և դրամաշնորհի առաջին մասի վճարում: 2. 2024 թվականի հունիսի 1-ից մինչև 2025 թվականի մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածում նախատեսվում է իրականացնել՝ 1) աշխատանքների ընթացքին ծանոթանալու նպատակով ՀՕՖ-ի մոնիթորինգի հանձնաժողովի այցելություններ գիտական խմբերին. 2) կազմկոմիտեի կողմից միջանկյալ հաշվետվությունների ընդունում. 3) դրամաշնորհի երկրորդ մասի վճարում (հոկտեմբեր 2024). 4) կազմկոմիտեի կողմից ամփոփիչ հաշվետվությունների ընդունում: 3. Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 65,505,000 դրամ, որից՝ 1) դրամաշնորհ 60,000,000 դրամ 2) ծրագրի ղեկավարի աշխատավարձ 3,000,000 դրամ 3) կապ և հեռահաղորդակցություն 205,000 դրամ 4) կոմունալ ծառայություններ 1,300,000 դրամ 5) գրասենյակային պիտույքներ 1,000,000 դրամ
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) կոմունալ ծառայություններ 1,300,000 դրամ 2) կապ և հեռահաղորդակցություն 205,000 դրամ 3) գրասենյակային պիտույքներ 1,000,000 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի սպասարկման համար ծախսվելու է 5,505,000 դրամ՝ ծրագրի ընդհանուր արժողության 8.4 %-ը: Ծրագրի սպասարկումը ներառում է՝

		1) ծրագրի ղեկավարի աշխատավարձ 3,000,000 դրամ 2) կապ և հեռահաղորդակցություն 205,000 դրամ 3) կոմունալ ծառայություններ 1,300,000 դրամ 4) գրասենյակային պիտույքներ 1,000,000 դրամ
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Վերահսկողությունը կատարվելու է ՀՕՖ-ի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

17.11.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ